ՄՈՊՐԻ ԲՋԻՋԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

# ԲՋԻՋՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՆՅՈՒԹԵՐԸ

369
Բ-97

ՄՈՊՐ-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏԿՈՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

*Երևան — 1929.*

369 28.04.2013 1 MAR 2010
Բ-97

## ՄՈՊՐԻ ԲՋԻՋԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

# ԲՋԻՋՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՆՅՈՒԹԵՐԸ

*ՄՈՊՐ-ի Համամիութենական սեկցիայի կանոնադրությունը։ ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի բջիջների կանոնադրությունը* (положение)։ *ՄՈՊՐ-ի վերստուգիչ հանձնաժողովների կանոնադրությունը։ ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ III-րդ ընդլայնված պլենումի վորոշումներից։ Նյութ ՄՈՊՐ-ի քաղաքային բջիջների աշխատանքի պլանը կազմելու համար։*

Ա. Մյասնիկյան

ՄՈՊՐ-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏԿՈՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Յերևան — 1929.

15739-57

44346

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՈՒԵՏ. № 1650բ.
ՏԻՐԱԺ 3000

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՈԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՍԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻ — «ԽՍՀՄ ՄՈՊՐ-Ի»

*(Հաստատված է ԽՍՀՄ ԺԿԽ 27 թ. 18 հունվարի № 196 արձանագրությամբ)*

## I. Նպատակները ու խնդիրները

*1. ԽՍՀՄ ՄՈՊՐ-ը, լինելով հեղափոխության մարտիկների ոգնության միջազգային կազմակերպության սեկցիան, իրա նըպատակն է համարում բարոյական, քաղաքական, իրավաբանական և նյութական ոգնություն ցույց տալ կապիտալի յերկրներում՝ հեղափոխական - դասակարգային կռվի և Արևելքի յերկրներում՝ ազգային ազատագրական շարժման զոհերին, նրանց ընտանիքներին, և. մասնավորապես-քաղաքական եմիգրանտներին։*

*2. ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի սեկցիան, իբրև աշ-*

խատավորության մասսայական կազմակերպությունը, իր աշխատանքը հիմնում է խորհրդային հասարակայնության սկզբունքների վրա։

3. ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի սեկցիան կապիտալի կալանավորներին օգնելու կոնկրետ փաստով նպաստում է իր անդամներին՝ ըմբռնելու միջազգային պրոլետարական հեղափոխության գործի համար մղվող կռվի նպատակները, խնդիրները և էությունը, ամրապնդելով ու զարգացնելով այն համերաշխության զգացմունքը, որ ԽՍՀՄ աշխատավորությունը տածում է դեպի համայն աշխարհի աշխատավորները, որոնք կռիվ են մղում կապիտալի լծից ազատվելու համար։

4. Հիշյալ նպատակներին հասնելու համար ՄՈՊՐ-ը իրավունք ունի ստեղծել կազմակերպություններ, մղել ագիտացիա ու պրոպագանդ՝ ՄՈՊՐ-ի գաղափարները պարզաբանելու համար և բողոքի կամպանիաներ՝ սպիտակ տեռորի դեմ, հավաքել միջոցներ, մասնակցության հրավիրել իրա-



վաբանական ույժերին և առանձին կազմակերպություններից շեֆություններ կազմակերպել բանտարկված հեղափոխականներին օգնելու համար։

5. ՄՈՊՐ-ի կազմակերպություններն իրենց աշխատանքը տանում են կուսակցական, արհեստակցական և հասարակական մյուս կազմակերպությունների հետ կոնտակտ պահպանելով։

## II. Կազմակերպության կազմն ու անդամների պարտականությունները

6. ՄՈՊՐ-ի անդամ կարող է լինել ամեն մի աշխատավոր և նրա ընտանիքի այն անդամները, որոնք զրկված չեն ընտրական իրավունքից, ընդունում են պրոլետարիատի դիկտատուրան, յենթարկվում են կանոնադրությանը, մտնում են կազմակերպություններից մեկն ու մեկի մեջ և տալիս են անդամավճար։

Ծանոթ.—ՄՈՊՐ-ի անդամ կարող են ընդունվել այն աշխատավորները, որոնց տարիքը 16-ից պակաս չէ։

7. Անդամության համար հիմք ընդունվում. ա) կամավորության սկզբունքը, բ) անհատական անդամագրությունը։

8. Անդամները տալիս են մուտքի և անդամակցական վճարներ այն չափով ու ժամկետներում, որ ՄՈՊՐ-ի հանրապետական կոմիտեները՝ ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ դիրեկտիվների հիման վրա սահմանում են։

9. Անդամները պարտավոր են աջակցել կազմակերպության ձեռնարկումներին, ակտիվորեն մասնակցել նրա աշխատանքին, բացատրել ՄՈՊՐ-ի գաղափարներն ու խնդիրները և նպաստել նոր անդամներ գրավելու։

## III. Անդամների ընդունելությունն ու վտարումը

10. Անդամի ընդունելությունը կատարում է ՄՈՊՐ-ի բջիջը։ Անդամ ընդունվելու համար բավական է անձնական հայտարարությունը։

11. ՄՈՊՐ-ի մի կազմակերպության անդամները, երբ տեղափոխվում են մյուսի



աշխատանքի շրջանը, վերջինիս կողմից ընդունվում են անդամ, հաշվելով առաջվա մտցրած վճարները։

12. Կազմակերպության կողմից հեռացնելը կատարում է բջիջը՝ ա) կանոնադրությունը խախտելու համար, բ) դատարանի վարկաբեկիչ վճռի հետևանքով։

Ծանոթ.—Հեռացվածին իրավունք է վերապահվում բեկման բողոք տալու վտարելու վորոշման դեմ վերադաս ինստանցիային։

## IV. ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի մարմինների մասին

13. ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի սեկցիայի կենտրոնական մարմիններն են.

ա) ՄՈՊՐ-ի Համամիութենական Համագումարը,

բ) Համամիութենական կոնֆերանսը,

գ) Կենտրոնական Կոմիտեն, նրա նախագահությունն ու քարտուղարությունը,

դ) Վերստուգիչ հանձնաժողովը։

## Ա. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

14. ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Համամիութենական Համագումարը ղեկավար մարմինն է և հրավիրվում է յերկու տարին մի անգամ։

Գումարման ժամանակը, ներկայացուցիչներ տալու չափը և Համագումարի օրակարգը վորոշում է Կենտրոնական Կոմիտեն և վաղորոք հայտարարում ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի պաշտոնական հրատարակություններում։

Ծ ա ն ո թ.—Արտակարգ Համագումարը կարող է հրավիրվել Կենտրոնական Կոմիտեյի կողմից իր նախաձեռնությամբ կամ կազմակերպությունների 1/3 մասի պահանջով։

15. Համամիութենական Համագումարի պարտականությունն է.

ա) քննել ու հաստատել Կենտրոնական Կոմիտեյի ու Վերստուգիչ Հանձնաժողովի հաշիվներն ու զեկուցումները,

բ) փոփոխել ու լրացնել կանոնադրությունը,

գ) ընտրել Կենտրոնական Կոմիտե և Վերստուգիչ Հանձնաժողով։



16. Համամիութենական կոնֆերանսները կարող են գումարվել Կենտրոնական Կոմիտեյի կողմից Համամիութենական համագումարների միջանկյալ ժամանակամիջոցներում։ Համամիութենական կոնֆերանսների իրավասությունը վորոշում է Համամիութենական Համագումարը։

## Բ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ

17. Կենտրոնական Կոմիտեն ընտրվում է համագումարում և վերջինիս սահմանած կազմով։

18. Կենտրոնական Կոմիտեն ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ղեկավար մարմինն է Համամիութենական համագումարների միջանկյալ ժամանակամիջոցներում։

Ծ ա ն ո թ.—ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ միաժամանակ է ՌՍՖԽՀ ՄՈՊՐ-ի ԿԿ է։

19. Կենտրոնական Կոմիտեն կիրառում է ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Համամիութենական համագումարների և ՄՈՊՐ-ի գործկոմի վորոշումները, ուղղություն է տալիս տեղական կազմակերպությունների գործունեյու-

թյանը, տնորինում է կազմակերպությունների բոլոր գործերը, գույքը և միջոցները, ուրիշ հիմնարկությունների և կազմակերպությունների հետ հարաբերություններ ունենալիս հանդես է գալիս իբրև ՄՈՊՐ-ի ներկայացուցիչ և իր աշխատանքի ու միջոցների մասին հաշիվ է տալիս Համամիութենական Համագումարին ու Գործադիր Կոմիտեյին:

20. Կենտրոնական Կոմիտեյի պլենումն իր միջից ընտրում է նախագահություն առնվազն 9 հոգուց բաղկացած կազմով, վորոնց թվում՝ նախագահ, փոխ-նախագահ և քարտուղարություն առնվազն բաղկացած 9 հոգուց: Նախագահությունն ու քարտուղարությունը մշտապես գործող մարմիններ են և տանում են ԿԿ ամբողջ աշխատանքը վերջինիս պլենումների միջանկյալ ժամանակներում:

21. Կենտրոնական Կոմիտեյի պլենումը հրավիրվում է նախագահության կողմից վոչ ուշ քան վեց ամիսը մի անգամ:

22. Կենտրոնական Կոմիտեն իրավունք ու-



նի տալ ամեն տեսակ պարտավորություններ, հայցեր հարուցել և պատասխանատու հանդիսանալ դատարանում ու կատարել այնպիսի իրավաբանական գործողություններ, վորոնք կապ ունեն ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի գործունեության հետ և բխում են նրանից:

23. Կենտրոնական Կոմիտեն վայելում է իրավաբանական անձի բոլոր իրավունքները, ունի իր կնիքը:

24. Գործնական աշխատանքի համար ԿԿ ստեղծում է բաժանմունքներ, վորոնք գործում են հատուկ կանոնների հիման վրա: ԿԿ նախագահության և քարտուղարության աշխատանքի վերաբերյալ կանոնադրությունը (положение) հաստատվում է ԿԿ պլենումի կողմից:

## Գ. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

25. Վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում է Համամիութենական Համագումարում այն կազմով, վոր սահմանում է Համագումարը:

26. Վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու չէ Համագումարի առաջ և աշխատում է անկախ, հավաքվելով ըստ իր հայեցողության, բայց վոչ ուշ քան յերեք ամիսը մի անգամ։

27. Վերստուգիչ հանձնաժողովը ստուգում է ինչպես ԿԿ, այնպես էլ նրան յենթակա հիմնարկությունների ու ձեռնարկությունների գործունեությունը։ Ստուգման ակտերը ԿԿ յեզրակացությամբ զեկուցվում են Համամիութենական Համագումարին։

28. ԿԿ նիստերին ներկա գտնվող Վերստուգիչ Հանձնաժողովի անդամներն օգտվում են խորհրդակցական ձայնի իրավունքով։

## V. Հանրապետական յեվ տեղական կազմակերպությունների մասին

29. ՄՈՊՐ-ի հանրապետական և տեղական կազմակերպությունների կազմակերպչական կառուցվածքն ու կազմության և գործունեության կարգը վորոշվում է հատուկ կանոնադրությամբ վորը հաստատում է ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտրոնական Կոմիտեն։



## VI. ՄՈՊՐ-ի բջիջների մասին

30. ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի բջիջները կազմակերպվում են ձեռնարկություններին, հիմնարկություններին, զորամասերին, դպրոցներին կից, գյուղերում, տուներում, ստանիցաներում և այլն։ Բջիջները գրանցվում են մոտակա կոմիտեյի կողմից։ Բջիջը կարելի յե կազմակերպել ու նրան գրանցման յենթարկել, յեթե կա առնվազն 5 անդամ։

Ծ ա ն ո թ.—ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ամեն մի անդամը պետք է մտնի ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի բջիջներից մեկն ու մեկի կազմի մեջ։

31. Բջիջների աշխատանքի կարգը վորոշվում է՝ համապատասխան դաշնակից հանրապետությունների ՄՈՊՐ-ի Կենտրոնական Կոմիտեների կողմից հաստատված կանոններով։

## VII. ՄՈՊՐ-ի միջոցները

32. ՄՈՊՐ-ի միջոցները կազմվում են.

ա) անդամակցական, մուտքի և ամսական վճարներից, բ) կամավոր հատկացումներից ու նվիրատվություններից, գ) ՄՈՊՐ-ի հրատարակությունների յեկամուտներից և դասախոսություններից, կինո-սեյանսներից ստացվող գումարներից և այլն։

33. ՄՈՊՐ-ի տեղական կոմիտեների հավաքած բոլոր միջոցները ամսե-ամիս, ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ ու դաշնակից հանրապետությունների ՄՈՊՐ-ի ԿԿ փոխադարձ համաձայնությամբ, անմիջապես փոխադրվում են ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ դրամարկղը։

34. Յեթե կոմիտեներից միջոցները մտնում են դաշնակից հանրապետության ԿԿ դրամարկղը, այդ դեպքում դաշնակից հանրապետության ԿԿ, հանելով այն գումարը, որ ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի սեկցիայի կենտրոնական Կոմիտեն նախահաշվային կարգով հատկացրել է տվյալ դաշնակից հանրապետության ՄՈՊՐ-ի ԿԿ ծախքերի համար, մնացած բոլոր գումարներն առանց ուշացնելու փոխադրում է ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ դրամարկղը։



## VIII. ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի լիկվիդացիան

35. ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի լիկվիդացիան կարելի յե կատարել ԽՍՀՄ ԺԿԽ վորոշմամբ կամ ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Համամիութենական Համագումարի կողմից՝ ձայների 2/3-ի մեծամասնությամբ ընդունված վորոշմամբ։

Լիկվիդացիայի կարգը սահմանվում է հատուկ վորոշմամբ։

# ԽՍՀՄ ՄՈՊՐ-Ի ԲՋԻՋՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ *)

## I. Բջիջների նպատակներն ու խնդիրները

1. Բջիջը, իբրև ՄՈՊՐ-ի նախնական կազմակերպությունը, նպատակ ունի նյութական և բարոյական աջակցություն ցույց տալ հեղափոխության մարտիկներին՝ իր անդամների ակտիվությունը զարթեցնելու միջոցով։

2. Հիշյալ նպատակներին հասնելու համար բջիջը՝

ա) գրավում է նոր անդամներ,

բ) տանում է նրանց մեջ դաստիարակչական աշխատանք ինտերնացիոնալ դասակարգային պայքարի վոգով,

*) Հաստատված է ՄՈՊՐ-ի I Համամիութենական համագումարի կողմից։



գ) ագիտկամպանիաներ է մղում, դրա համար օգտագործելով բանավոր ու տպագրական պրոպագանդայի բոլոր ձևերը,

դ) մասնակցում է բողոքի ցույցերին,

յե) ամեն տեսակ միջոցներ ձեռք է առնում ՄՈՊՐ-ի նյութական միջոցներն ավելացնելու համար,

զ) հավաքում է ՄՈՊՐ-ի գործունեության վերաբերյալ տեղեկությունները և հաղորդում վերադաս մարմիններին,

է) կատարում է վերադաս մարմինների բոլոր դիրեկտիվներն ու հանձնարարությունները,

3. ՄՈՊՐ-ի բջիջները կազմակերպվում են բոլոր ձեռնարկություններին, խրճիթ-ընթերցարաններին, դպրոցներին ու զորամասերին կից, աուլներում, կիշլաղներում և այլ կազմակերպություններում, յեթե ՄՈՊՐ-ի անդամների թիվը 5 ից պակաս չէ։

Ծանոթ.—ՄՈՊՐ-ի մենակ անդամները մտնում են մոտակա բջիջի կազմի մեջ։

Ծանոթ.—Խոշոր ձեռնարկություն-

125
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ Անվան Публичная Библиотека
15Ժ-39-57

ներում թույլատրվում ե կազմակերպել ցեխ (цеховыя) բջիջներ, վորոնց ղեկավարում ե ձեռնարկության միացյալ բյուրոն։

## II. Անդամների կազմն ու պարտականությունները

4. ՄՈՊՐ-ի անդամ կարող ե լինել ամեն մի աշխատավոր և նրա ընտանիքի անդամները, վորոնք զրկված չեն ակտիվ և պասիվ ընտրական իրավունքից, ընդունում են պրոլետարիատի դիկտատուրան, յենթարկվում են կանոնադրությանը, մտնում են կազմակերպություններից մեկն ու մեկի մեջ, և տալիս են անդամավճարներ

*Ծանոթ.*—ՄՈՊՐ-ի անդամ են ընդունվում այն աշխատավորները, վորոնց տարիքը 16 ից պակաս չե։

5. Անդամության համար ընդունվում ե իբրև հիմք.

ա) խիստ կամավորությունը և անհատական անդամագրությունը։



6. Անդամները պարտավոր են ակտիվ կերպով աջակցել բջիջի բոլոր ձեռնարկումներին, ակտիվորեն մասնակցել նրա աշխատանքին, տարածել ՄՈՊՐ-ի գաղափարները, գրավել նոր անդամներ և ճշտորեն կատարել ՄՈՊՐ-ի կանոնադրության բոլոր պահանջները։

7. Բջիջի անդամները տալիս են մուտքի և անդամակցական վճարներ այն չափով և ժամկետներում, վոր սահմանում ե ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ։

8. Մի կազմակերպության անդամ, յերբ անցնում ե մի ուրիշի աշխատանքի շրջանը, վերջինիս կողմից դասվում ե իրա անդամների շարքը, հաշվելով նրա արած նախկին մուծումները։

## III. Բջիջի մարմինները

9. Բջիջի մարմիններն են.

ա) Ընդհանուր ժողովը,

բ) Բջիջի բյուրոն և

գ) Վերստուգիչ հանձնաժողովը։

10. Ընդհանուր ժողովը բջիջի գերա-

դույն մարմինն է և գումարվում է առնվազն ամիսը մի անգամ։

*Ծ ա ն ո թ.*— Գյուղում ժողովները գումարվում են ըստ հնարավորության, բայց ոչ պակաս քան յերկու ամիսը մի անգամ։

11. Ընդհանուր ժողովի իրավունքն է.

ա) լսել բյուրոյի և վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը, զեկուցումները հեղափոխական շարժման, սպիտակ տեռրորի մասին և այլն,

բ) հաստատել նոր ընդունված անդամներին և նրանց վտարումը,

գ) քննել ու հաստատել աշխատանքի պլանը,

դ) ընտրել բյուրո և վերստուգիչ հանձնաժողով,

յե) ընտրել զանազան հանձնաժողովներ կամպանիաներ անցկացնելու, ՄՈՊՐ-ի անկյուններ հիմնելու, յերեկույթներ տալու համար և այլն։

12. Բյուրոն ընտրվում է առնվազն 15 հոգի ունեցող բջիջի կողմից, բաղկացած 3



անդամից և 2 թեկնածուներից, իսկ յեթե 15-ից ավելի յե, 3-ից մինչև 7 անդամ և 2 թեկնածու։

*Ծ ա ն ո թ.* — 15 հոգուց պակաս թիվ ունեցող բջիջը ընտրում է լիազոր։

13. Բյուրոյի նիստերը տեղի յեն ունենում ոչ ուշ քան յերկու շաբաթը մի անգամ, ինչպես նաև հերթական կամպանիաներից առաջ։

14. Վերստուգիչ հանձնաժողովը ընտրվում է բջիջի կողմից, բաղկացած 3 անդամից և 2 թեկնածուից։

15. ՄՈՊՐ-ի վերադաս մարմինները իրավունք ունեն բացարկել բջիջի ղեկավար մարմինների կողմից մեկն ու մեկին։

16. Բջիջի բյուրոն և վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում են 6 ամիս ժամանակով։

17. *Բ յ ու ր ո յ ի պ ա ր տ ա կ ա ն ու թ յ ու ն ն է*։

ա) ղեկավարել ընթացիկ աշխատանքը և հրավիրել բջիջի ընդհանուր ժողովները,

բ) մշակել աշխատանքի պլանը,

գ) կիրառել վերադաս մարմինների դիրեկտիվները,

դ) ընդունել նոր անդամներ,

յե) ակտիվ աշխատանքի մեջ քաշել բջիջի անդամներին, նրանց մեջ պարտականությունները ճշտորեն բաշխելու միջոցով,

զ) ՄՈՊՐ-ի ակտիվ աշխատակիցների (ակտիվիստների) կադր ստեղծել,

ը) ՄՈՊՐ-յան կամպանիաներ նախապատրաստել ու անցկացնել («Մարտի 18-ը» և ուրիշ օրեր, դեկլավար կազմակերպությունների վորոշմամբ),

թ) ՄՈՊՐ-ի անկյուններ հիմնել բջիջի անդամների ուժերով.

ժ) կազմակերպել դասախոսություններ, զեկուցումներ, միտինգներ, համերգներ, ներկայացումներ, կինո-սեանսներ, կիոսկներ և այլն,

ի) ստեղծել՝ մամուլի տված նյութերի և ՄՈՊՐ-ի գրականության հիման վրա՝ ժամանակակից հեղափոխական շարժումների



ու քաղկալանավորների կենցաղն ուսումնասիրող խմբակներ,

լ) տարածել ՄՈՊՐ-ի գրականությունը, ժետոնները, բացիկները և այլն,

խ) մասնակցել տեղական պատի լրագրերին և հատուկ ՄՈՊՐ-յան լրագրեր հրատարակել,

ծ) պարզել բջիջի գործունեությունը մամուլում,

կ) անդամավճարներն ու մյուս ստանալիքները գանձել կանոնավոր,

հ) անդամների և միջոցների ճիշտ հաշվառում կատարել,

ձ) հավաքված միջոցներն ու հաշիվները ժամանակին հանձնել վերադաս մարմնին,

ղ) հանձնված միջոցների վերաբերյալ տեղեկությունները ամեն ամիս հրապարակել պատի լրագրերում և ՄՈՊՐ-ի անկյուններում,

ճ) կապ հաստատել մոտակա բջիջների հետ փորձի փոխանակման համար, նմանապես գյուղում աշխատանք կատարող շեֆհանձնաժողովների հետ համերաշխ կեր-

պով և միասին աշխատել՝ ՄՈՊՐ-ի գյուղական բջիջներին աջակցություն ցույց տալու գործում։

18. Ընթացիկ աշխատանքը տանելու համար բջիջի բյուրոն ընտրում է իր միջից նախագահ, քարտուղար և գանձապահ։

19. Վերստուգիչ հանձնաժողովի ֆունկցիաներն են.

ա) ստուգել բջիջի ընդհանուր գործունեությունը,

բ) հսկողություն ունենալ, վորպեսզի անդամավճարներն ու մյուս դրամական միջոցները ժամանակին մտնեն բջիջի բյուրոն,

գ) հետևել, վորպեսզի միջոցներն ու հաշիվները ճշտապահությամբ հանձնվեն վերադաս մարմնին և գործավարությունը կանոնավոր տարվի,

դ) պարբերաբար հաշիվ տալ ընդհանուր ժողովին,

20. Վերստուգիչ հանձնաժողովի անդամները կարող են ներկա լինել բյուրոյի նիստերին խորհրդակցական ձայնով։



## IV. Ուրիշ կազմակերպությունների հետ փոխհարաբերություններ ունենալու յեվ բջիջի ապարատի մասին

21. Իր ընթացիկ աշխատանքը ՄՈՊՐ-ի բջիջը տանում է տեղական կազմակերպությունների հետ (ՀԱՄԿԿ և ՀԱՄԼԿՅԵՄ բջիջները, գործարկոմ, տեղկոմ, կինկազմ և այլն) համաձայնությամբ ու կոնտակտ պահպանելով։

22. ՄՈՊՐ-ի բջիջն իր կնիքը չունի։

## V. Անդամների ընդունելությունն ու վտարումը

23. ՄՈՊՐ-ի անդամ ընդունելը կատարվում է անհատապես։

24. Անդամ լինելու համար բավական է անձնական հայտարարությունը բջիջի բյուրոյին։

25. ՄՈՊՐ-ի անդամների կազմից հեռացնելը կատարվում է.

ա) կանոնադրությունը խախտելու համար և

ե) դատարանի վարկաբեկիչ դատավճռի հետևանքով։

## VI. Բջիջի միջոցները

26. Բջիջի միջոցները կազմվում են.

ա) մուտքի և անդամակցական վճարներից,

բ) կամավոր հատկացումներից և նվիրատվություններից,

գ) ՄՈՊՐ-ի հրատարակությունների, ժետոնների վաճառումից և այլն,

դ) դասախոսություններից, դեկուցումներից, համերգներից, ներկայացումներից, կինո-սեանսներից սարքված յեկամուտներից և այլն։

27. Բոլոր միջոցները բջիջը լիովին և անհապաղ հանձնում է անմիջականապես և բացառապես ՄՈՊՐ ի համապատասխան բարձր մարմնին։

28. Հ ա վ ա ք վ ա ծ մ ի ջ ո ց ն ե ր ը ծ ա խ ս ե լ բ ջ ի ջ ի կ ա ր ի ք ն ե ր ի վ ր ա ա ն թ ո ւ յ լ ա տ ր ե լ ի յ ե։



## VII. Կանոնադրության փոփոխումն ու լրացումը

29. Կանոնադրության փոփոխումն ու լրացումը կատարում է ԽՍՀՄ ՄՈՊՐ ի ԿԿ ազգային, մարզային և նահանգական կազմակերպությունների դիմումի համաձայն։

## VIII. Բջիջի լիկվիդացիան

30. Բջիջի լիկվիդացիան կարող է տեղի ունենալ.

ա) համաձայն վերադաս մարմնի վորոշման,

բ) ձեռնարկության, հիմնարկության կամ կազմակերպության լիկվիդացիայի դեպքում։

31. Լիկվիդացիայի կարգը սահմանում է ՄՈՊՐ-ի տեղական բարձր կազմակերպությունը։

# ՄՈՊՐ-Ի ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ *)

## I. Նպատակները ու խնդիրները

1. ՄՈՊՐ-ի կազմակերպությունների բոլոր տեսակի գործունեության վրա մշտական հսկողություն սահմանելու նպատակով, բոլոր կոմիտեներին ու բջիջներին կից ընտրվում են վերստուգիչ հանձնաժողովներ։

2. Վերստուգիչ հանձնաժողովների խնդիրներն են.

ա) գործնականորեն իրականացնել հսկողությունը կոմիտեների ու բջիջների գործունեության նկատմամբ.

բ) ժամանակին հաշիվ տալ իր աշ-

*) ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ III-րդ պլենումի վորոշման համաձայն ստորին վերստուգիչ հանձնաժողովների գործունեության ղեկավարությունը դրվում է ՄՈՊՐ-ի վերադաս կոմիտեների վրա։ Վերստուգիչ հանձնաժողովների վերաբերյալ այս կանոնադրությունը հաստատված է I Համամիութենական համաժողովի կողմից։



խատանքների մասին իրանց ընտրող կազմակերպություններին։

## 2. Վերստուգիչ հանձնաժողովների կառուցվածքն ու կազմը

3. Վերստուգիչ հանձնաժողովներն ընտրվում են ՄՈՊՐ-ի կոնֆերանսներում կամ բջիջների ընդհանուր ժողովներում, կոմիտեների կամ բջիջների բյուրոների լիակազմության ժամկետով, բաղկացած առնվազն 3 անդամից և 2 թեկնածուից։

4. Աշխատանքները տանելու համար վերստուգիչ հանձնաժողովներն իրենց միջից ընտրում են նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար։

Ծանոթ.—Վերստուգիչ հանձնաժողովի թեկնածուները հրավիրվում են մասնակցելու նրա աշխատանքին։

5. Վերստուգիչ հանձնաժողովները հաշվետու յեն իրենց ընտրող կազմակերպությունների առաջ։

6. Վերստուգիչ հանձնաժողովները գոր-

ծում են ինքնուրույն, հավաքվելով իրենց ուզած ժամկետներին։

## 3. Վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքի բովանդակությունը

7. Վերստուգիչ հանձնաժողովների պարտքն է.

ա) պարբերաբար հետազոտել կոմիտեների և բջիջների բյուրոների ընդհանուր գործունեյությունը,

բ) հսկել վորպեսզի ժամանակին ձեռք առնվեն այն միջոցները, վորոնք նշված են աշխատանքների պլանում,

գ) ստուգման յենթարկել նրանց ֆինանսական դրությունը,

դ) վերահասու լինել, վոր կանոնավոր տարվեն գործավարությունը և բոլոր տեսակի հաշիվներն ու ժամանակին ներկայացվեն վերադաս կոմիտեյին.

ե) հսկել, վոր վարկային հիմնարկություններում ընթացիկ հաշվով մացրած միջոցները պահպանվեն և ժամանակին փոխադրվեն վերադաս մարմնին,



զ) հետևել, վոր գրականության համար արված պարտքերը ժամանակին վճարվեն և անդամավճարները — կանոնավոր ըստացվեն,

ը) յեզրակացություն տալ կոմիտեների ֆինանսական հաշիվների ու նախահաշիվների մասին.

թ) զեկույցներ ու հաշվետվութ. անել իրենց գործունեյության մասին կոնֆերանսներում և ընդհանուր ժողովներում։

## 4. Կոմիտեների ու բջիջների հետազոտելու կարգը

8. Ընդհանուր հետազոտումներ կատարելիս վերստուգիչ հանձնաժողովները պահպանում են հետևյալ կարգը.

ա) բջիջներն ու ռայկոմները հետազոտվում են առնվազն ամիսը մի անգամ.

բ) շրջկոմները, գավկոմները և ռայկոմները քաղաքներում հետազոտման են յենթարկվում վոչ պակաս քան 2 ամիսը մի անգամ.

գ) մարզկոմներն ու նահանգական կոմիտեները հետազոտվում են վոչ պակաս քան 2—3 ամիսը մի անգամ։

Ծանոթ.—Կոմիտեների ու բջիջների ֆինանսական գործունեյությունը վերստուգման է յենթարկվում ամեն ամիս։

9. Վերստուգիչ հանձնաժողովները հարկավոր դեպքում կարող են հետազոտում կատարել ավելի հաճախ, հանկարծակի վերստուգումների միջոցով։

10. Հետազոտման ակտերը վերստուգիչ հանձնաժողովները վոչ միայն ներկայացնում են իրենց կոմիտեյին (բջիջի բյուրոյին), այլև ուղարկում են վերադաս մարմինների հայեցողության և կարդում են կոնֆերանսներում ու ժողովներում։

Ծանոթ.—Ակտերի մեջ անպայման պետք է հիշատակված լինեն բոլոր նըկատված թերությունները ու նշված այն կոնկրետ միջոցները, վորով կարելի յե նրանց վերացնել, ինչպես նաև կոմիտեների ու բջիջների աշխատանքի դրական կողմերը։

11. Ակներև դեղծումներ հայտնաբերելու



դեպքում, վերստուգիչ հանձնաժողովները շտապ միջոցներ են ձեռք առնում նրանց վերացնելու համար, դատի տալով հանցավորներին ու թույլ չտալով նրանց այլևս աշխատելու։

## 5. Փոխհարաբերությունները ու կապը կոմիտեների ու բջիջների հետ

12. Հետազոտումներ կատարելիս՝ կոմիտեները (բջիջների բյուրոները) պարտավոր են լիակատար աջակցություն ցույց տալ վերստուգիչ հանձնաժողովներին իրենց աշխատանքում։

13. Կոմիտեների հետ (բջիջների բյուրոների) կապն ամրապնդելու և նրանց ընթացիկ գործունեյության հետ ծանոթանալու համար վերստուգիչ հանձնաժողովների անդամները մասնակցում են կոմիտեների (բջիջների բյուրոների) նախագահությունների և պլենումների նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով։

14. Հետազոտումը կատարելուց հետո վերստուգիչ հանձնաժողովները զեկուցում-

*ներ են տալիս կոմիտեների (բջիջների բյուրոների) նիստերում, մատնանշելով նըկատված թերությունները վերացնելու միջոցները։*

*15. Վերստուգիչ հանձնաժողովները կարող են պահանջել կոմիտեներից (բջիջների բյուրոներից), որ նրանք հրավիրեն արտակարգ նիստեր (ընդհանուր ժողովների) իրենց կատարած աշխատանքի և առհասարակ իրենց գործունեության մասին հաշվետու զեկուցումը լսելու համար։*

---

# ԽՍՀՄ ՄՈՊՐ-Ի ԿԿ III-ՐԴ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ *)

## 1. Բջիջների աշխատանքների մասին

*6. Բջիջը մեր կազմակերպության հիմքն ե հանդիսանում։ Աշխուժացնել բջիջների աշխատանքներն անհնարին ե առանց բանվորական դեմոկրատիան կիրառելու և առավելագույն ձեռներեցություն ու ինքնագործունեություն ցուցաբերելու։ Առանց այդ պայմանների բջիջները չեն կարող խորհրդային հասարակայնության նախնական դպրոցները դառնալ։ Այդ պատճառով էլ անհրաժեշտ ե բոլոր կազմակերպությունների աշխատանքի ծանրության կենտրոնը*

*) *Տես կազմակերպչական և ֆինանսական հարցերի մասին ընդունված բանաձևերը, «ՄՈՊՐ-ի ԿԿ բյուլլետենը» № 2, 1927 թ., եջ 8 և 12։*

փոխադրել բջիջների գործունեյության աշխուժացման և բարելավման վրա։

7. Պլենումը, նշելով բջիջների կառուցման կազմակերպչական նոր ձևերի գոյությունը ձեռնարկություններում (ցեխ-բջիջները) և բաղային ու խմբակային (кустовый) բջիջային միավորությունների, ինչպես նաև թաղային ու փողոցային բջիջների առաջ գալը գյուղերում, հանձնարարում է ԿԿ նախագահությանը և տեղական կազմակերպություններին ուսումնասիրել այդ կազմակերպչական նոր ձևերը այն նպատակով, որ նրանցից պահվեն ամենակենսունակները։

8. Պլենումն առաջարկում է բոլոր կազմակերպություններին՝ ղեկավարություն ընդունել և կատարել ՀԱՄԿ (բ) Կ կից կազմված կամավոր ընկերությունների խորհրդակցությունների ընդունած որոշումները քաղաքային և գյուղական բջիջների աշխատանքի մասին, որոնք հրատարակված են «ԿԿ բյուլլետեն» № 14-ում, 1926 թ.։ Ի զարգացումն այդ որոշումների



ԿԿ նախագահությանը հանձնարարվում է հրատարակել դիրեկտիվներ և լույս ընծայել բջիջների կողմից քաղաքում և գյուղում կատարելիք աշխատանքի վերաբերյալ հրահանգչական ձեռնարկներ։

## 2. Վերստուգիչ հանձնաժողովների մասին

18. Վերստուգիչ հանձնաժողովների աշխուժացման համար պլենումն անհրաժեշտ է համարում նշել բոլոր կազմակերպություններին հետևյալ միջոցները կիրառելու անհրաժեշտությունը.

ա) վերստուգիչ հանձնաժողովների կազմը պետք է ընտրված լինի այնպիսի ակտիվ ընկերներից, որոնք աշխատանքով չեն ծանրաբեռնված և ցանկանում են վերստուգման աշխատանքին մասնակցել,

բ) կոմիտեները պետք է իրականացնեն ղեկավարությունն իրենց յենթակա վերստուգիչ հանձնաժողովների նկատմամբ՝ հրավիրելով խորհրդակցություններ, հրահանգչական զեկուցումներ տալով և լսելով

նրանց աշխատանքի վերաբերյալ ցեկուցումները համահավասար հաշվետու կոմիտեների։

գ) վերստուգիչ հանձնաժողովներն իրենց աշխատանքի պրակտիկայում պիտի մտցնեն վերստուգման աշխատանքի պլաններ կազմելը։

դ) կոմիտեներին և բջիջների բյուրոներին պարտավորացնել՝ իրենց նիստերին մասնակից անելու վերստուգիչ հանձնաժողովների անդամներին խորհրդակցական ձայնով։

յե) վերստուգիչ հանձնաժողովների գործունեությունը պետք է սիստեմաթիքաբար պարզաբանել ՄՈՊՐ-ի կենտրոնական և տեղական մամուլի մեջ։

## 3. Ակտիվի մասին

22. Կազմակերպության աշխատանքի հաջող զարգացումը կախված է, գլխավորապես, կազմակերպության ամենօրյա պրակտիկ աշխատանքում գործոն մասնակ-



ցություն ցույց տվող ակտիվ աշխատողների կադր ունենալուց։

23. Պլենումը մատնանշում է, որ մեր կազմակերպությունները ստեղծել են ակտիվի վորոշ կադրեր, սակայն նրանք բավական չեն նրանց լրիվին սպասարկելու համար։ Խոշոր նշանակություն տալով ակտիվի նոր կադրեր կազմելուն, պլենումը նշում է, որ բոլոր կազմակերպությունները պետք է լուրջ ուշադրություն նվիրեն հետևյալ հարցերին. ա) ակտիվի նոր կադրերի հայտնաբերմանն ու հաշվառմանը, բ) նրանց վորակը բարձրացնելուն՝ կոմիտեների ու բջիջների պրակտիկ աշխատանքում ոգտագործելու միջոցով, գ) հանձնարարությունները նրանց մեջ կանոնավոր կերպով բաշխելուն, հետագայում ստուգելով նրանց կատարումը, դ) ընդունակ ակտիվիստներին ավելի պատասխանատու աշխատանքի և բջիջներում ու կոմիտեներում հասարակական ընտրովի պաշտոններ վարելու համար առաջ քաշելուն, յե) նրանց անհրաժեշտ գրականությամբ ու ձեռնարկ-

ներով ապահովելուն, դ) նրանց համար ընթացիկ աշխատանքի հարցերի մասին հրահանգչական զրույցներ ու դեկուցումներ կազմակերպելուն։

24. Պլենումն առաջարկում է բոլոր կազմակերպություններին՝ լուրջ ուշադրություն դարձնել բջիջներում քարտուղարական կազմի ընտրություն անելու ու ամրացնելու խնդրի վրա և շարունակ բարձրացնել նրանց վորակը՝ կանոնավոր ժողովներ գումարելու և այնտեղ գործնական աշխատանքի բոլոր տեսակների մասին հրահանգչական դեկուցումներ կազմակերպելու միջոցով։

25. Ակտիվիստների ընթացիկ աշխատանքը դյուրացնելու համար նախագահությանը հանձնարարվում է նրանց աշխատանքի համար ձեռնարկ հրատարակել («Ակտիվիստի ուղեցույցը»)։

## 4. ՄՈՊՐ-ի ֆինանսական դրությունը

1. III-րդ պլենումն արձանագրում է, վոր մուծումները բավականին պակասել են և դրա շնորհիվ էլ կրճատվել են հեղափոխու-



թյան մարտիկներին, նրանց ընտանիքներին ու քաղեմիգրանտներին տրվող նպաստների չափերը։

2. Պլենումը նշում է նույնպես, վոր ՄՈՊՐ-ի արտասահմանյան սեկցիաները, չնայելով իրենց աշխատանքում ունեցած մեծ նվաճումներին, ֆինանսական տեսակետից դեռևս չեն կարողացել ամրապնդվել։ Դրա հետևանքով ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ սեկցիան այսուհետև էլ պիտի մնա կապիտալի կալանավորներին, նրանց ընտանիքներին նպաստավորելու գլխավոր պահեստը։

3. ՄՈՊՐ-ի ֆինանսական դրության վերլուծությունը ցույց է տալիս, վոր մուծումների նվազման գլխավոր պատճառներն են. ա) անդամակցական և մուտքի վճարումների ցանցի չափերի զգալի նվազումը, բ) անդամների վերահաշվառման ձգձգումը և տեղերին անդամական տոմսերն ու մուծումները հանգցնող մարկաները ժամանակին չհայթայթելը, գ) նվիրատվությունների ու կամավոր վճարումների թուլացումը, դ) անդամավճարների, դրականության և

այլ նյութերի համար հասանելիք գումարների զգալի մասի չգանձվելը, յե) նախահաշվային դիսցիպլինայի խախտումը, զ) կոմիտեների ապարատի ու կազմակերպչական կարիքների վրա կատարվող ծախսերի աճումը, ը) կազմակերպչական մասում յեղած վատնումները, թ) կոմիտեներին ու բջիջներին կից գործող վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքի թուլությունը, ժ) ստորին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվության կանոնավորված չլինելը, ի) տեղական կազմակերպությունների վոչ բավարար ուշադրությունը դեպի ֆինանսական գործունեյությունը։

## 2. Միջոցներն ուժեղացնելու ձեռնարկումները

### ՏԵՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

14. Բոլոր կազմակերպություններին առաջարկել միջոցներ ձեռք առնել՝ ստուգելու անդամավճարների մուծումները, բոլորովին լիկվիդացիայի յենթարկել դրանց



պարտքերը և հետագայում այլևս թույլ չտալ, վոր պարտքեր մնան։ Դրա հետ միաժամանակ ժողովներում և մամուլի միջոցով անհրաժեշտ է բացատրել ՄՈՊՐ-ի անդամներին մոպրյան կոպեկի նշանակությունը։

15. Տեղական կազմակերպությունները ՄՈՊՐ-ի միջոցներն ուժեղացնելու համար պետք է ամեն կերպ խրախուսեն բջիջների նախաձեռնությունը՝ կազմակերպելու ՄՈՊՐ-ի ոգտին ներկայացումներ, համերգներ, կինո-սեանսներ և այլն, դրա հետ միաժամանակ հետապնդելով նաև ագիտպրոպագանդի նպատակներ։

Զուտ առևտրական տիպի ձեռնարկությունները, վորոնք ՄՈՊՐ-ի արժանապատվության հետ անհամատեղելի յեն, չպետք է թույլատրվեն։

16. Բջիջների ագիտպրոպ աշխատանքն ուժեղացնելու նպատակով, հնարավոր համարել նրանց թողնելու իրենց կազմակերպած վճարովի ձեռնարկումներից ստացված զուտ յեկամուտի մինչև 25 տոկոսը։

21. Բջիջները վոչ ուշ քան յերեք ամի-

սը մի անգամ պետք է հաշիվ տան իրենց անդամներին հավաքած, ուղարկած և ծախսած գումարների մասին, հրապարակելով իրանց ֆինանսական հաշվետվությունները պատի լրագրերում, նաև կախեն նրանց աչքի ընկնող տեղերում։

24. Վատնումների հնարավորությունը վերացնելու նպատակով, անհրաժեշտ համարել հետևյալ ձեռնարկումները. ա) կոմիտեների և բջիջների մեջ մտցնել իբրև գանձապահներ հասարակական վստահությունը վայելող անձանց, բ) կանոնավոր հիմքերի վրա դնել ու տանել ֆինանսական հաշվային գործը ՄՈՊՐ-ի բոլոր կոմիտեներում ու բջիջներում, գ) ամեն ամիս վերստուգիչ հանձնաժողովի միջոցով քննել կոմիտեների ու բջիջների ֆինանսական գործունեյությունը, դ) թույլ չտալ, որ դրամական միջոցները մնան մեկն ու մեկի մոտ, այլ պահել խնայողական դրամարկղներում կամ վարկային հիմնարկություններում, յե) վերստուգիչ հանձնաժողովները պետք է հսկողություն ունենան անդա-



մավճարների հանգուցման մարկաներն ու
ստուգիչ (կոնտրոլային) ցուցակները բջիջ-
ներում օգտագործելու վրա։

25. Վատնում կատարողները, անկախ նրանց դիրքից, պետք է, իբրև կանոն, գա-
տի հանձնվեն, գանձելով նրանցից վատ-
նըված գումարները։ Հարկավոր է նույն-
պես աշխատել հասարակական ցուցադրա-
կան դատեր կազմակերպել վատնողների
նկատմամբ։

26. Կտրուկ կերպով արգելել ՄՈՊՐ-ի
միջոցները ուրիշ կազմակերպությունների,
հիմնարկություններին ու անձանց պարտք
տալը։ Կազմակերպության ֆինանսական
դրության մասին անհատական պատասխա-
նատվությունը դնել կոմիտեների ու բջիջ-
ների նախագահների, քարտուղարների և
գանձապահների ու համապատասխան վեր-
ստուգիչ հանձնաժողովի վրա։

## ՆՅՈՒԹ ՄՈՊՐ-Ի ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՋԻՋՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ներքևում բերված նյութը մշակել է ՄՈՊՐ-ի ԿԿ կազմբաժինը և ՄՈՊՐ-ի բջիջի պլանը մշակելիս օժանդակ է հանդիսանում որացուցային ժամկետներում, ըստ վորում՝ աշխատանքի առանձին մոմենտները պետք է կիրառել, նայելով առաջուց արդեն տարված աշխատանքին ու տեղական պայմաններին։ Այդ նյութն ընդգրկում է, ինչպես այն բջիջների աշխատանքը, ուր դեռևս կազմակերպչական ձևակերպում չկա, այնպես էլ ձևակերպված բջիջի աշխատանքը։

Բացի այդ նյութից, աշխատանքի պլանի հիմք պիտի կազմեն. ա) ՄՈՊՐ ի վերադաս կոմիտեյի (շրջկոմ, գավկոմ կամ մարզային ու նահանգական կոմիտեները) աշխատանքի պլանը, բ) այն դիրեկտիվային



նյութերը (հրահանգները, շրջաբերականները, հոդվածները), վորոնք հրատարակված են «ՄՈՊՐ-ի ԿԿ բյուլլետեն»-ում և տեղական կազմակերպությունների բյուլլետեններում։

Աշխատանքի պլանը պետք է մշակել պարբերաբար (1—2 ամիսը մի անգամ), յելակետ ունենալով տեղական պայմանները, և կազմել պարզ ու հակիրճ այն հաշվով, վոր կարելի լինի իրագործել։

## I. Կազմակերպչական աշխատանք

### ԲՅՈՒՐՈՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

1. Կազմակերպչորեն ձևակերպել բջիջը՝ անդամների ընդհանուր ժողովում բյուրոյի և վերստուգիչ հանձնաժողովի ընտրություն կատարելով։ Այնտեղ, ուր արդեն կա բյուրո և վերստուգիչ հանձնաժողով, վերընտրությունները կատարել համաձայն այն ժամկետի, վոր սահմանում է «բջիջների կանոնադրությունը»։ Դրա հետ միասին ձգտել բյուրոյի և վերստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ գրավելու անկուսակցական ակտիվ անդամներին։

2. Բջիջի բյուրոյի աշխատանքը (նիստերը), կանոնավորել համաձայն կանոնադրության։ Մշակել նիստերի օրացույցը, հիշելով օրակարգի հարցերը։

3. Պարտականությունները բաժանել բյուրոյի անդամների միջև։

4. Ըստ հնարավորության, ստեղծել կազմակերպչական և ագիտացիոն հանձնաժողով (սեկցիաներ), նրա մեջ մտցնելով ՄՈՊՐ-ի շարքային ակտիվ անդամներին։

5. Կիրառման մտցնել անդամների և ակտիվի կանոնավոր հաշվառումը, համաձայն մշակված ձևի։

6. Պարզել և հաշվառման յենթարկել ակտիվը, աշխատանքի մեջ քաշելով նրան և ըստ պլանի տալով վորոշ հանձնարարություններ։

7. Հետևել աշխատանքի պլանի կատարմանը և պահել տարված աշխատանքի կանոնավոր հաշվառումը։

8. Հաշիվ տալ տարված աշխատանքի ու բջիջի դրության մասին այն ժամկետներում, վոր սահմանված է կանոնադրու-



թյամբ. ա) անդամների առաջ, բ) վերադաս կոմիտեյի առաջ։

9. Սերտ կապ հաստատել վերադաս կոմիտեյի հետ և ժամանակին կատարել նրա բոլոր դիրեկտիվները։

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԵՋ

10. Կանոնավոր կերպով հրավիրել ՄՈՊՐ-ի անդամների ընդհանուր ժողովները, աշխատելով առնվազն 1—2 ամիսը մի անգամ ՄՈՊՐ-ի օր նշանակել տալ։

Այդ ժողովներում անդամներին ծանոթացնել ՄՈՊՐ-ի կանոնադրության հետ, նշանակել բյուրոների հաշվետու զեկուցումները, ծանոթացնել աշխատանքի պլանի հետ, նշանակել ագիտացիոն բնույթի զեկուցումներ (սպիտակ տերրորի, առանձին քաղաքական դեպքերի մասին և այլն)։

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

11. Հետևել վորպեսզի ճիշտ ու կանոնավոր կերպով գանձվեն անդամավճարները սահմանված ցանցով։ Անհրաժեշտ թվով

հավաքարարներ ջոկել շարքային անդամների միջից, վորոնց հանձնել անդամավճարների ու կամավոր նվիրատվությունների գանձումը։

12. Հետևել վորպեսզի միջոցները ժամանակին հանձնվեն վերադաս կոմիտեյին։

13. Պարզել անդամավճարներից ու գրականությունից մնացած պարտքերը և լիկվիդացիայի յենթարկել։

14. Ուժեղացնել միջոցներ գտնելը, կազմակերպելով վճարովի ներկայացումներ, համերգներ, կինո-սեյանսներ և այլ ձեռնարկություններ։

15. Պահել կանոնավոր ֆինանսական հաշվետվություն հաշվապահական միասնական ձևով և այն ներկայացնել ինչպես վերադաս կոմիտեներին, այնպես էլ անդամներին (բանավոր կամ պատի լրագրի միջոցով, անկյունում)։

—



## II. Ագիտպրոպ աշխատանք

### ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳԾՈՎ

1. Կազմակերպչորեն ձևակերպել ագիտպրոպ հանձնաժողովը։

2. Կանոնավորել հանձնաժողովի աշխատանքը, նրա նիստերը նշանակելով վոչ ուշ, քան ամիսը մի անգամ։

3. Ամենօրյա ագիտացիոն պրոպագանդիստական աշխատանքի մեջ քաշել հանձնաժողովի բոլոր անդամներին։

4. Ուժեղացնել ագիտ-հանձնաժողովի կապն այն կազմակերպությունների հետ, վորոնք տեղերում կուլտկրթական աշխատանք են տանում (տեղկոմի կամ գործարկոմի կուլտ-հանձնաժողովը, կուսբջիջը, ակումբը և այլն)։

### ԱԳԻՏԱՑԻԱՅԻ ԳԾՈՎ

1. Նախապատրաստել ու անցկացնել մոպրյան կամպանիաները։

2. Կազմակերպել եքսկուրսիաներ դեպի մոպրյան ցուցահանդեսները, մոպրյան

ցուցադրական անկյունը կամ (յեթե պլանը կազմվում ե ամառվա համար) կազմակերպել զբոսանքներ դեպի մոտակա գյուղերը կամ այն վայրերը, վորոնք կապված են հեղափոխական պայքարի պատմության հետ։

3. Տեղական ակումբում, ժողովրդական տանը կամ խրճիթ-ընթերցարանում տալ մոպրյան դեկուցումներ, կազմակերպել մի քանի մոպրյան յերեկույթներ (յեթե պլանը կազմվում ե ամառվա համար, այդ դեպքում այդ անել բացօդյա)։

4. Անկյունի սիստեմատիկ աշխատանքին, վորքան կարելի յե, մեծ թվով ՄՈՊՐ-ի անդամներ մասնակից անել։

5. ՄՈՊՐ-ի անկյունը լրացնել ու նորել թարմ նյութով և անկյունում կազմակերպել մի քանի զրույցներ ու ընթերցումներ։

6. Յեթե պլանը կազմվում ե արձակուրդներին նախորդող ժամանակամիջոցի համար, այդ դեպքում նրա մեջ մտցնել՝ աշխատանքն արձակուրդավորների հետ։



## ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ ԳԾՈՎ

1. Այն բջիջներում, ուր այդ կարելի յե, կազմակերպել ՄՈՊՐ-ի խմբակներ, իսկ այն տեղերում, ուր այդպիսին կազմակերպված ե արդեն, շարունակել նրա աշխատանքը։

2. Սիստեմատիկաբար հաշվի առնել խմբակի աշխատանքը, նրա ղեկավարի դեկուցումները դնելով ագիտ պրոպ հանձնաժողովի նիստերում և ագիտ պրոպ հանձնաժողովի անդամներին հրավիրելով ներկա գտնվել խմբակի պարապմունքներին։

## ՇԵՖՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

1. Շարունակել գրագրությունը շեֆարկյալ բանտի հետ, վորքան կարելի յե, մեծ թվով բջիջի անդամներ մասնակից անելով շեֆական նամակները գրելուն։

2. Շեֆական գրագրությունների ամենահետաքրքիր մասը պարզաբանել պատի լրագրի եջերում։

3. Կազմակերպել ընթերցումներ և զրույցներ բջիջի անդամներին ծանոթացնե-

լու համար այն յերկրի հեղափոխական շարժման հետ, վորի բանտերի շեֆն է բջիջը։

## ՄԱՄՈՒԼԻ ԳԾՈՎ

1. Կարգավորել և ուժեղացնել բջիջի ագիտպրոպաշխատանքի պարզաբանումը տեղական մամուլում և ՄՈՊՐ-ի մամուլի էջերում։

2. Կանոնավոր կերպով պարզաբանել ՄՈՊՐ-ի աշխատանքի հարցերը տեղական պատի լրագրերում։

3. Ուժեղացնել ՄՈՊՐ-ի գրականության տարածումը, մշտական բաժանորդներ գտնելով «ՄՈՊՐ ի ուղին» (Путь МОПР-а) և «Բյուլլետեն» պարբերաթերթերի համար։

## III. Վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքը

1. Ընտրել (կամ վերընտրել, ուր նա արդեն կա) վերստուգիչ հանձնաժողով և վորոշել նրա կանոնավոր աշխատանքը, հա-



մաձայն կանոնադրության։ Վերստուգիչ հանձնաժողովները պետք է պարբերաբար հաշիվ տան իրենց կատարած աշխատանքի մասին ինչպես անդամների առաջ (ընդհանուր ժողովներում) և պատի լրագրերում, այնպես էլ վերադաս կոմիտեյի առաջ։

Վերստուգիչ հանձնաժողովներն առան-
ձին ուշադրությամբ պիտի հետևեն, վոր
դրամական միջոցները ժամանակին ու ծրա-
տությամբ հանձնվեն։ Միաժամանակ պիտի
հետևեն ընդհանուր աշխատանքի ընթացքին։

## IV. Կապը գյուղի հետ

1. Կապ հաստատել շեֆ ընկերության հետ ու նրա միջոցով աշխատանքի փորձի փոխանակում կատարել ՄՈՊՐ-ի գյուղական բջիջի հետ և հնարավոր աջակցություն ցույց տալ վերջինիս աշխատանքում (տեղեր գնացող ընկերների միջոցով տալ հրահանգներ, կազմակերպել զեկուցումներ, զրույցներ, ընթերցումներ, հայթայթել գրականություն, օգնել պլանը կազմելուն և այլն)։

# ՄՈՊՐ-Ի ԱԶԳԱՅԻՆ, ՄԱՐԶԱՅԻՆ ՈՒ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

*1. ՄՈՊՐ-ի ազգային, մարզային ու յերկրային կազմակերպությունների մարմիններն են.*

*ա) ազգային համագումարը, մարզային, յերկրային կոնֆերանսը,*

*բ) ազգային կազմակերպության ԿԿ, մարզային, յերկրային կոմիտեն,*

*գ) վերստուգիչ հանձնաժողովը։*

## Ա. Ազգային համագումարը, մարզային, յերկրային կոնֆերանսը

*2. Ազգային համագումարը, մարզային, յերկրային կոնֆերանսը հրավիրվում է կենտրոնական, մարզային, յերկրային կոմիտեյի կողմից 2 տարին մի անգամ, ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ հետ համաձայնեցրած ժամկետներում ու պլանով։*



*3. Կոնֆերանսը կազմվում է այն պատգամավորներից, վորոնք ընտրում են տըվյալ մարզի, յերկրի կամ հանրապետության մեջ մտնող ստորադաս կազմակերպությունների կոնֆերանսներում այն նորմաներով, վոր սահմանում է կենտրոնական, մարզային, յերկրային կոմիտեն ու համաձայնեցվում ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ հետ։*

*4. Կոնֆերանսի (ազգ. համագումարի) զբաղմունքներն են.*

*ա) լսել ու հաստատել մարզային, յերկրային, ազգային կոմիտեյի ու վերըստուգիչ հանձնաժողովի հաշվետվություններն ու զեկուցումները,*

*բ) կատարել ԿԿ մարզային կամ յերկրային կոմիտեյի ու վերստուգիչ հանձնաժողովի ընտրությունները,*

*գ) պատգամավորներ ընտրել համամիութենական համագումարի համար։*

*5. Կոմիտեյի անձնական ու թվական կազմը սահմանվում է կոնֆերանսի (ազգային համագումարի) կողմից։*

*Ծանոթ.—ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ իրավունք ունի բացարկելու կոմիտեյի առանձին անդամներին։*

## Բ. Ազգային կազմակերպությունների, մարզային ու յերկրային կոմիտեների ֆունկցիաները

6. Կազմակերպչական.

ա) կատարել ՄՈՊՐ-ի համամիութենական ու տեղական համագումարների, կոնֆերանսների վորոշումներն ու ԿԿ դիրեկտիվները և հետևել, վորպեսզի բոլոր տեղական կազմակերպությունները նրանց կիրառեն կյանքում,

բ) ղեկավարել ՄՈՊՐ-ի տեղական կազմակերպությունների աշխատանքը և վերահսկել նրանց գործունեյության վրա կոնֆերանսներից (ազգային համագումարներից) մինչև կոնֆերանս։

գ) հրավիրել կոնֆերանսներ (ազգային համագումարներ), վորոշել նրանց գումարման ժամկետը, որակարգը և ներկայացուցչության նորմաները,



դ) մշտական կապ պահպանել կուսակցական, արհեստակցական ու այլ կազմակերպությունների հետ,

յե) մշակել աշխատանքի պլանը,

զ) տեղական կազմակերպություններին պլանային կարգով հրահանգներ տալ և հետազոտման յենթարկել,

է) ուսումնասիրել և հաշվի առնել տեղական կազմակերպությունների (դրանց թվում բջիջներինը քաղաքում և գյուղում) փորձը,

ը) հաշվառման յենթարկել բջիջների ակտիվի անդամներին և մշակել աշխատավորության զանազան խավերին ՄՈՊՐ-ի շարքերը ներգրավելու միջոցներն ու նրանց մեջ տարվելիք աշխատանքի մեթոդները։

թ) մշակել քաղաքում և գյուղում գտնըվող ստորադաս կոմիտեների ու բջիջների աշխատանքի մեթոդներն ու ձևերը,

ժ) հաշվառման յենթարկել յեկող քաղեմիգրանտներին, իրավաճանաչման գործերով կապ հաստատել Կենտրոնական Էմիգրացիոն հանձնաժողովի հետ, նյութական

օգնություն հասցնել նրանց, գործի գնել և քաղդաստիարակչական աշխատանք տանել նրանց մեջ, իր ղեկավարության տակ առնել քաղէմիգրանտների տեղական տները,

ի) խիստ հաշվառման ենթարկել միջոցները, ղեկավարել նյութական միջոցներ գտնելու և անդամավճարներն ու կամավոր նվիրատվությունները գանձելու աշխատանքը, ԽՍՀՄ ի ՄՈՊՐ-ի ԿԿ նշած տարեկան դիրեկտիվային նախահաշիվը մասնատրել շրջանների միջև և վերահսկու լինել նրա կատարմանը,

լ) նախնական քննության ենթարկել ազգային ԿԿ, մարզկոմների, երկրկոմների շտատների հարցը և նրանց ներկայացնել ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ ի հաստատություն։

Ծ ա ն ո թ.—Այդ շտատների պահպանման միջոցներն անմիջականորեն բաց է թողնում ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ սահմանված նախահաշիվներով,

խ) շրջանային կոմիտեների նախահաշիվները հաստատել,



7. Ա գ ի տ ա ց ի ո ն.

ա) մասսայականացնել ՄՈՊՐ-ի գաղափարներն ու խնդիրները աշխատավորական լայն մասսաներում բանավոր ու գրավոր ագիտացիայի ու պրոպագանդայի միջոցով,

բ) նախապատրաստել ու անցկացնել ՄՈՊՐ-ի կամպանիաները (մարտի 18-ը և այլն),

գ) օգտագործել մամուլը ՄՈՊՐ-ի աշխատանքներն ու սպիտակ տեռրորը պարզաբանելու համար,

դ) բողոքի միտինգներ ու ցույցեր կազմակերպել սպիտակ տեռրորի դեմ և քաղաքական բանտարկյալներին ամնիստիա տալու օգտին,

յե) մշակել ՄՈՊՐ-ի խմբակների ու դասընթացների համար ծրագրեր և մեթոդական ձեռնարկներ։

զ) հրատարակել գրականություն (գլխավորապես ազգային լեզուներով) այն պլանով, որը հաստատել է ԿԿ։

է) շեֆության հարցերը,

## Գ. Կենտրոնական, մարզային ու յերկրային կոմիտեների կազմն ու կառուցվածքը

*8. Վերոհիշյալ խնդիրներն իրագործելու համար ազգային, մարզային, յերկրային կոմիտեյի պլենումն իր կազմի միջից ընտրում է նախագահություն առնվազն 7 անդամից բաղկացած, վորոնց թվում նախագահին, նախագահի տեղակալին ու քարտուղարին:*

*9. Նախագահությունն ազգային, մարզային, յերկրային կոմիտեյի գործադիր մարմինն է և աշխատում է պլենումների միջանկյալ ժամանակամիջոցներում:*

*10. Նախագահության նիստերը տեղի յեն ունենում վոչ ուշ քան 2 շաբաթը մի անգամ: Պլենումը հրավիրվում է նախագահության կողմից հարկավոր դեպքերում, բայց վոչ ուշ քան վեց ամիսը մի անգամ:*

*11. Նախագահությունը հանդիսանում է ԿԿ, մարզկոմի, ռայկոմի ներկայացուցիչը ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ և այլ կազմակերպությունների ու հիմնարկությունների հետ ունեցած հարաբերությունների միջոցին:*



*12. Պարտականությունները կենտրոնական, մարզային, յերկրային կոմիտեյի անդամների միջև ճշտորեն բաշխելու և տեղերին պատշաճ կերպով ղեկավարելու համար կոմիտեյին կից կազմակերպվում են հետևյալ սեկցիաները.*

*ա) կազմակերպչական-ֆինանսական*

*բ) ագիտ-պրոպագանդային,*

*գ) գյուղում տարվելիք աշխատանքի:*

*Ծանոթ. — Կոմիտեյին իրավունք է վերապահվում այդ սեկցիաների սահմաններում կազմակերպել նույնպես հանձնաժողովներ հարկավոր դեպքերում, տեղական պայմաններին նայելով:*

*13. Սեկցիաներն ու հանձնաժողովները կազմվում են կամավորության սկզբունքով և աշխատում են նախագահության անդամների ղեկավարությամբ:*

*14. Սեկցիաներն ու հանձնաժողովները մշակում են իրենց աշխատանքի պլանը,*

*վորը քննվում ու հաստատվում ե նախագահության կողմից։ Իսկ նախագահությունն ել կազմում ե աշխատանքի ընդհանուր պլանը, վոր յենթակա յե ԿԿ պլենումի, մարզկոմի, յերկրկոմի քննության ու ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ հաստատման։*

*15 Կոմիտեն ունի իր շտամպն ու կնիքը հետևյալ գրությամբ. «Հեղափոխության Մարտիկների Ոգնության Միջազգային Կազմակերպություն, մարզային, կենտրոնական կամ յերկրային կոմիտե» (հիշվում ե հանրապետության, մարզի կամ յերկրի անունը)։*

## Դ. Վերստուգիչ հանձնաժողովը

*16. Վերստուգիչ հանձնաժողովն ընտըրվում ե առնվազն 3 անդամից և 2 թեկնածուից։*

*17. Վերստուգիչ հանձնաժողովի ֆունկցիաներն են.*

*ա) հետազոտել կոմիտեյի ընդհանուր գործունեությունը վոչ ուշ քան 2—3 ամիսը մի անգամ.*



*բ) հսկել, վորպեսզի բոլոր տեսակի հաշիվներն ու գործավարությունը կանոնավոր տարվեն,*

*գ) ստուգման յենթարկել կազմակերպության ֆինանսական դրությունը,*

*դ) զեկուցումներ ու հաշիվ տալ իր գործունեության մասին կոնֆերանսներում (ազգային համագումարներում)։*

*18. Վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու յե կոնֆերանսի առաջ (ազգ. համագումարի)։*

*19. Վերստուգիչ հանձնաժողովն իր հետազոտությունների մասին կազմած արձանագրությունները տալիս ե կոմիտեյին նըկատված թերությունները վերացնելու համար և պատճեններով ել հաղորդում ե ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ։*

*20. Վերստուգիչ հանձնաժողովի անդամները ներկա յեն լինում նախագահության ու կոմիտեյի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով։*

## ՅԵ. Կապը կենտրոնի հետ յեվ հաշվետվության կարգը

*21. Կանոնավոր կապ պահպանելու և աշխատանքի ղեկավարությունը հեշտացնելու համար ազգային, մարզային, յերկրային կոմիտեները վեց ամիսը մի անգամ իրենց գործունեյության մասին մանրամասն հաշվետվություններ ու զեկուցումներ են ներկայացնում ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ։*

*Ծանոթ.—Ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են ամեն ամիս, վիճակագրականը՝ 6 ամիսը մի անգամ։*

*22. Կապը պահպանվում է՝ ա) հատուկ գրագրությունների միջոցով, բ) «ՄՈՊՐ-ի ԿԿ բյուլետեն»-ի միջոցով հրահանգներ տալով, գ) ՄՈՊՐ-ի ԿԿ ներկայացուցիչների կողմից տեղերն այցելելով և դ) զեկուցումներ տալու համար կենտրոն կանչելով։*

*23. Այս կանոնադրությունը կազմված է ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի սեկցիայի կանոնադրության 5-րդ գլխի ու § 28—29 կարգադրման համար։*

---

## ՄՈՊՐ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԶԱՆԱԶԱՆ ՏՈՒՐՔԵՐԻՑ ՈՒ ՀԱՐԿԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. Քաղվածք ԽՍՀՄ Ժողովրդական կոմիսարների խորհրդի 1927 թ. մայիս 3-ի նիստի № 211 արձանագրությունից

*ԽՍՀ Միության ԺԿԽ 1925 թ. փետրվ. 13-ի վորոշումը՝ Հեղափոխության Մարտիկների Օգնության Միջազգային Կազմակերպության (ՄՈՊՐ) կազմակերպած հանդեսները հաճախողներին Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի ընկերությունների օգտին տուրք վճարելուց ազատելու մասին (ԽՍՀ Միության Օրեն. Ժող., 1925 թ. № 9, եջ 84)՝ գրել հետևյալ խմբագրությամբ.*

*«Հեղափոխության Մարտիկների Օգնության Միջազգային Կազմակերպության*

(ՄՕՊՐ) կազմակերպած հրապարակային հանդեսներն ու զվարճությունները, բացի կազինոյից ու լոտոյից, հաճախողներին ազատել Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի ընկերությունների օգտին տուրք վճարելուց»։

ԽՍՀՄ ԺԿԽ քարտուղարի տեղակալ՝
Լ. ՖՈՏԻՅԵՎԱ

Կ. Տ. ճիշտ է (ստորագրություն)

---

## 2. Պետհարկի վորոշումից

Հեղափոխության Մարտիկների Օգնության Միջազգային Կազմակերպությունը (ՄՕՊՐ-ը) ազատ է դրոշմատուրքից-տուրքից ազատվածների կարգի § 7-ի հիման վրա (դրոշմային տուրքի կանոնադրության 2-րդ հավելվածը)։

Պետական հարկերի վարչության պետի տեղակալ՝ ԴՈԲՐՈՍՄԻՍԼՈՎ
Ի տեղի բաժնի վարիչի՝
ՍՈՒՊԵՐԱՆՍԿԻ



## 3. ԽՍՀՄ ԺԿԽ վորոշումից

ԽՍՀՄ ՄՕՊՐ-ի կազմակերպությունները, ինչպես նաև այն ձեռնարկությունները, վոր շահագործում է նա տանից վարձով տալու, ազատել արհեստագործական հարկից, դրոշմատուրքից, դատական պոշլինաներից, նմանապես այնպիսի ակտերի համար նոտարական վճարումներից, վորոնց նոտարական կարգով կատարելը պարտադիր է։

ԽՍՀՄ ԺԿԽ Նախագահի տեղակալ՝
Ա. ՑՅՈՒՐՈՊԱ

ԽՍՀՄ ԺԿԽ և ԱՊԽ գործերի վարիչ՝
Ն. ԳՈՐԲՈՒՆՈՎ

ԽՍՀՄ ԺԿԽ քարտուղար՝
Ի. ՄԻՐՈՇՆԻԿՈՎ

1927 թ. հունվ. 18 № 195

---

Публичная Библиотека

# ՑԱՆԿ


1) Կանոնադրություն ՄՈՊՐ-ի 3

2) ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի բջիջների կանոնադրությունը 16

3) ՄՈՊՐ-ի վերստուգիչ հանձնաժողովների կանոնադրությունը 28

4) ՄՈՊՐ-ի ԿԿ III ընդլայնված պլենումի վորոշումներից 35

5) Նյութ ՄՈՊՐ-ի քաղաքային բջիջների աշխատանքային պլանը կազմելու համար 46

6) ՄՈՊՐ-ի ազգային, մարզային ու յերկրային կազմակերպությունների կանոնադրութ. 56

7) ՄՈՊՐ-ի կազմակերպություններին զանազան տուրքերից ու հարկերից ազատելու մասին 67

ՀՀ Ազգային գրադարան
NL0227326

44.346

## ՄՈՊՐ-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| | | |
|---|---|---|
| 1 | Մարտի.—Ֆրանսիական հանրապետության բանտերում | 30 կ. |
| 2. | Մարտինով.—ՄՈՊՐ-ը յեվ շեֆությունը | 05 ,, |
| 3. | Գորնեվ.—Ինչ պետք ե գիտենա ամեն մի պյուղացի | 05 ,, |
| 4 | Գեյլեր.—Ո՞ւմ ե և ինչպես ե օգնում ՄՈՊՐ-ը | 05 ,, |
| 5. | Տարականովա.—Գեղջկուհի, մտիր ՄՈՊՐ-ի շարքերը | 05 ,, |
| 6 | Մինկով.—Ինչպես են ապրում պյուղացիները կապիտալիստական յերկրներում | 05 ,, |
| 7. | Գեյլեր.—ՄՈՊՐ-ը Խորհրդային Միության մեջ | 05 ,, |
| 8. | Դասակարգային պայքար և ՄՈՊՐ-ը, քրիստոմատիա Ա. մաս | 65 ,, |
| 9. | Դասակարգային պայքար և ՄՈՊՐ-ը, քրիստոմատիա Բ. մաս | 60 ,, |

**Բջիջներին արվում ե 30% զեղչ**

Պատվերները և պահանջները ուղղել ՄՈՊՐ-ի Հայկենտկոմին ու գավկոմներին և „Հայգրքի" բոլոր բաժանմունքներին

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.